

— Խաչկի կղզու մ հիմնուած յունական աստուածաբանական դպրանոցը Պալսի յունական պատրիարքութեան միակ միջնակարգ դպրանոցն է, որտեղ աւարտածներից կազմուած է ստորին և բարձր հոգևորականութեան դասը: Դպրանոցի տեսուչն է Կիէվի հոգևոր ճեմարանի կանգիտատ մետրոպոլիտ Երինէյը: Դասուստուներն են նոյնպէս բարձրագոյն կրթութեան տէր անձինք: Անցեալ տարի դպրանոցն ունէր 70 աշակերտ, որոնցից 12 հոգի ընթացաւարտ, որոնց քննութիւններին ներկայ էին Իօակիմ Գ. պատրիարքն ու Սինոդի անդամները: Թէ՛ պատրիարքը և թէ՛ Սինոդի անդամները ամենայն տարի ամբողջ շաբթով դնում են Խաչկի, ուր հէնց դպրանոցի շէնքում նորա շարունակում են նաև իրենց սինոդական պարապմունքները: Հանդէսը բացւում է մաղթանքով, որից յետոյ միտք. Երինէյը կարգում է դպրանոցի տեղեկագիրն ու ձեռք առնուելիք բարեփոխութիւնների ծրագիրը: Մեծ ցանկութիւն կայ դպրանոցում հիմնել առանձին թերթ, ինչպէս Երուսաղէմի դպրանոցն ունի («Նոր-Սիօն») և որին կարող են աշխատակիցել նաև բարձր դասարանի աշակերտները, քանի որ նորա ունեն պատրաստութիւն այդ մասին: որ երևում է հէնց քննութիւններին նոցա ներկայացրած շարագրութիւններից («Լատինիացի Ապօլէինարիոսն ու իւր վարդապետութիւնը», «Եպիսկոպոսների ընտրութիւնը պատմական և կանոնադրական տեսակէտից», «Կղեմէնտ Աղէքսանդրիացու վարդապետութիւնը հաւատքի և դիտութեան մասին», «Կուսակրօնութեան խնդիրը արևելքում», «Պետրոս առաքեալի և Հռոմի առաջնութեան խնդիրը ըստ սուրբ գրոց և ըստ վարդապետութեանց եկեղեցու սուրբ հայերի մինչև Գ. դարը») և չն:

Քննութիւնները անցնում են շատ յաջող. ապա ի ներկայութեան պատրիարքի, եկեղեցում, ընթացաւարտները հանդիսաւոր երգումն տալով հաւատարմութեամբ ծառայել եկեղեցուն ու ազգին—ստանում են իրենց դիպլոմները: Հանդէսը վերջանում է ընդհանուր ճաշով, որից յետոյ պատրիարքը, միտրոպոլիտներն ու բոլոր պատուաւոր հիւրերը պաշտօնապէս շնորհակտութեամբ են նորաւարտներին, բարեմաղթելով նոր ասպարէզում ոյժ և եռանդ յօգուտ եկեղեցու ու ազգի գործելու:

Պոլսոյ պալատական մատենադարանը: Այս մատենադարանը քիւզանդական կայսրների հաշակաւոր մատենադարանն է, որ անցել էր թուրքերի ձեռքը 1453 թ. Պուլիսը առնելուց յետոյ: